

ԿԵՐԱԿՈՒՐ

18. — Աղուհաց կտրել: — Ասով կը սկսի ընթրիքը: Ի հնուց շատ յարգի եղած է աղը մարդկութեան մէջ: Զայն իրենց երգմանց վկայ կ'առնուին Յոյները (Գար. Գ, 1010), Պարսիկները (Փաւս. 164) եւ Հրեայք (Բ Մնց. ԺԳ, 5): Հոովմայեցիք զոհագործութեանց պահուն աղած կարկանդակ մը կը նուիրէին զից՝ իբրեւ անոնց հաճելի նիւթ (Գար. անդ), եւ Հրեայք կ'աղէին իրենց զոհերը (Ղեւտ. Բ, 13): Աղը նաեւ նշանակ էր բարեկամութեան, հիւրասիրութեան, խօսից հաւատարմութեան եւ այլն (Գար. անդ):

Աղը մեր քով ալ ունէր նոյն կարեւորութիւնն ու նշանակութիւնը: Զայն կը խառնէին մատաղի օրհնութեան մէջ՝ զոր պիտի տեսնենք իւր կարգին: Եւ Դենշապուհ պարսիկն ուզելով ցոյց տալ իւր կեղծ համակրութիւնը հայ ազգին, կ'ըսէր Ղեւոնդեանց. Որովհետեւ «աղուհաց՝» կերած եմ՝ ձեր աշխարհին մէջ, «զուժ եւ

1. Տպագրութեանց մէջ անջատ, եւ մէկ բառ կը համարիմ զայդ, նկատելով հետագայ օրինակաց մէջ լոկ վերջին արմատին հոլովումը, յարակից բայից եզակի ձեւը, եւ «աղուհաց» բարդը: